



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ

ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

Հ Ր Ա Մ Ա Ն

«23» մարտի 2011թ.

N 665-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 21-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՈՉ ՌԵԶԻԴԵՆՏԻ ՎՃԱՐԱԾ ՀԱՐԿԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՆՔԻ  
ՁԵՎԸ ԵՎ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 03-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 11<sup>1</sup> հոդվածը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 4-ի N1005-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 18-րդ կետի 4-րդ ենթակետը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի 2008 թվականի մարտի 21-ի «Հայաստանի Հանրապետությունում ոչ ռեզիդենտի վճարած հարկերի մասին տեղեկանքի ձևը և տրամադրման կարգը հաստատելու մասին» N03-Ն հրամանի հավելվածով հաստատված «Հայաստանի Հանրապետությունում ոչ ռեզիդենտի վճարած հարկերի(շահութահարկ, եկամտահարկ) մասին տեղեկանքի տրամադրման կարգ» (այսուհետ՝ կարգ) և « Հայաստանի Հանրապետությունում ոչ ռեզիդենտի վճարած հարկերի մասին տեղեկանք» (այսուհետ՝ տեղեկանք) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.


1) Կարգի 1-ին կետում «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայություն» բառերը փոխարինել «Կենտրոնական գանձապետարանի հաշվառման հարկային տեսչություն» բառերով,

2) կարգի 5-րդ կետում «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայությունը» բառերը փոխարինել «Կենտրոնական գանձապետարանի հաշվառման հարկային տեսչությունը» բառերով,

3) տեղեկանքի 1-ին կետում «դրամ» բառերից հետո ավելացնել «( գումար, արտարժույթ)» բառերը:

4) տեղեկանքում «ՀՀ ԿԱ ՀՊԾ» բառերը փոխարինել «ՀՀ ԿԱ ՊԵԿ» բառերով:

**Հայաստանի Հանրապետության կառավարությանն  
առընթեր պետական եկամուտների  
կոմիտեի նախագահ**



**Գ. Խաչատրյան**